

ՊԱՅՄԱՆՔ
Տարեկան գին և. Գոյնայ 8 ՄԼՏ
Վաւաւայ 10 ՄԼՏ
Կոյնայ 4 ՄԼՏ
Վաւաւայ 5 ՄԼՏ
Եւրոպայի թերթի գին 60 փոյ
Գոյնայ անոյն անոյն անոյն անոյն
Տար 3 զուրուշ, երկու անոյն անոյն
Տար 2 զուրուշ, անոյն անոյն անոյն
Եւրոպայի գոյն անոյն անոյն անոյն



Լ Ր Ա Գ Ի Ր

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՊԱՅՄԱՆՔ
Կարգադրած լրագրաց ևն ու
ձաւար ձաւար ձաւար ձաւար
Կարգադրած լրագրաց ևն ու
ձաւար ձաւար ձաւար ձաւար
Կարգադրած լրագրաց ևն ու
ձաւար ձաւար ձաւար ձաւար
Կարգադրած լրագրաց ևն ու
ձաւար ձաւար ձաւար ձաւար

ՊԱՅՄԱՆՔ 27 ՓԵՏՐՈՎԱՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գաղղիոյ Օրինաւորական և Պոնա-
բարթեան կուսակցութիւնները Սահ-
մանադրական օրինաց հաստատու-
թիւնն արդիւեք համար ամեն ճիշ-
թափեւեալ և, ճիշտ ալ յուսահատ
զայրութեամբ Օրինական կուսակցու-
թեան դէմ կը բարդընեն, որ Հանրա-
պետականաց հետ միանալով, անց-
եալ տարուան մայիս 24-ի միասնա-
կան միութիւնը քաղաքացի և փետր.
24-ի Հանրապետական յաղթանակը
բերին, յաղթանակ մը, որ այս անգամ
այլ թէ բուն յաղթանակութեան, այլ
երկրին ճշմարիտ շահուց և ժողո-
վրդեան բաղձանաց նկատողութեան
արդարեւ և հասուն խորհրդածու-
թեան պատու է:

Քուէարկեալ Սահմանադրական
օրէնքները թէ և կատարեալ չեն,
թէ և հանրապետութիւնը վերջնա-
կան կերպիւ չեն հաստատուել, և
այնպէս կատարական անտարբե-
ւորութեամբ և երկրուն վիճակը կանո-
նաւորելով վերջ կուտան կուսակցա-
կան միջմանց, և մանաւանդ Պոնա-
բարթեան և Օրինաւորական դա-
ւադրութեանց, որք երկիրը միշտ
սրտատանջութեան և երկիւղի մէջ
կը պահէին: Հանրապետականք, ան-
ցեղայն փորձերէն խրատեալ, երեք
տարիէ ի վեր այնպիսի խնայական,
հանդարտ, լուրջ և ծանրաբարոյ ըն-
թացք մը բռնեցին, որ ժողովրդեան
ամենէն երկիւղաւ և կոտորածաւ մասե-
րուն իսկ համակրութիւնն ու վստա-
հութիւնը դրաւեցին, և այսպէս
հանրապետութեան կողմնակիցներուն
թիւն օր քան զօր ուսուարացաւ, հա-
տարակաց կարծիքն ամեն կողմէ ի
նպաստ հանրապետութեան արձա-
դանք տալ սկսաւ, հետզհետէ կա-
տարուած երեսփոխանական ընտրու-
թեանց ամենամեծ մասին մէջ հան-
րապետականք յաղթութիւնը սա-
րին, և Մար-Մահան մարտախա-
կաւորութիւնն և ազգային ժո-
ղովոյ մեծամասնութիւնը կազմող ան-
դամաց հայրենասէր մասն երկրին
տրամադրութեանցն ուղղեալ վեր-
ջապէս համոզուեցան որ միասնա-
կեան վերահաստատութիւնն անհր-
եաքն էր. հետեւաբար հարկադրե-
ցան ընել այն բանն ինչ որ երկու
տարի առաջ Պ. Թիւրքի անկմանը
պատճառ եղած էր. այն է սրահայ-
նողական հանրապետութիւնը կազ-
մաւորելով երկրին կանոնաւոր կա-
ռավարութիւնն ընել:

Ահաւասիկ Գաղղիոյ նոր սահմա-
նադրութիւնն, որ հաստատուելիս իշ-
խանութիւնները կը կազմաւորէ յա-
նուն հանրապետութեան:

Յօդ. 1. Օրէնդրական իշխանու-
թիւնն երկու ժողովոյ ձեռք կը
գործածուի. երեսփոխանական և ծե-
րակուտի ժողովոյ:

Երեսփոխանական ժողովը ընդհա-
նուր քուէով կանուանի ընտրական
օրինաց սահմանած սրայմաններով:
Երեսփոխանին կազմութիւնը, ընտ-
րութեան եղանակն ու պաշտօնը յա-
տուկ օրէնքով սահմանուած են:

Յօդ. 2. Հանրապետութեան նա-
խագահը ծերակուտին և երեսփո-
խանութեան միացեալ ժողովներէն
կընտրուի. քուէից բացարձակ առա-
ւելութեամբ, ու թաւաւոյ համար,
և վերջապէս է:

Յօդ. 3. Հանրապետութեան նա-
խագահն օրէնքներ առաջարկելու
իրաւունք ունի երկու ժողովոյ ան-
դամներուն հետ, անոնց (երկու ժո-
ղովոյ) քուէարկած օրէնքները կը
հրատարակէ, և գործադրութեանը
կը հսկէ:

Կենաց շնորհ ընելու իրաւունք
ունի իսկ յանցանաց ներուժն օրէն-
քով սահմանուած սրայմաններով:
Չօրէն անոր հրամանին ներքե է:
Ամեն քաղաքացի և զինուորա-
կան պաշտօնատարները նա կան-
ուանէ:

Ազգային հանդէսներուն կը նա-
խագահէ:

Օտար աշխարհեանց զեպանե-
րն անոր քով կը հաստատուին:

Հանրապետութեան նախագահին
ամեն հրամանագրերը նախարարէ
մ'ալ ստորագրելով պէտք է ըլլան:

Յօդ. 4. Պետական խորհրդոյ մէջ
պարագլուղը պատահած ժամանակ
Հանրապետութեան նախագահը նա-
խարարաց խորհրդով նոր անդամներ
կընտրէ սովորական պաշտօնի համար:

Այս կերպիւ ընտրուած պետա-
կան խորհրդականք նախարարոյ
խորհրդոյն սրահամբ միայն կրնան
պաշտօնէ ձգուիլ:

1872 մայիս 24-ի օրինաց դրու-
թեամբ անուանեալ պետական խոր-
հրդականք նոյն օրինաց սրահամբ կեր-
պիւ միայն կրնան պաշտօնէ ձգուիլ:

Ազգային ժողովոյ մեկնելէն ետե
պաշտօնանկութիւնը ծերակուտին
վճարով միայն կրնայ կատարուիլ:

Յօդ. 5. Հանրապետութեան նա-
խագահը ծերակուտին համաձայն
խորհրդով կրնայ երեսփոխանական
ժողովը ժամանակէն առաջ լուծել:

Այս պարագայիս մէջ ընտրու-
կան ժողովները գումարուելով նոր
ընտրութիւն կրնան մինչև երեք ա-
միս:

Յօդ. 6. Նախարարք կառավա-
րութեան ընդհանուր աշխարհակա-
րութեան մասին համարաշխարհ
պատասխանատու են ժողովոյ առ-
ջէ. իրենց անձնական գործոց մա-
սին ալ անհատաբար պատասխանա-
տու են:

Հանրապետութեան նախագահն
ազգին դէմ գաւաճանութիւն մը
բաժնի ժամանակ միայն պատասխանա-
տու է:

Յօդ. 7. Երբոր նախագահական
տիպուք թափուր մնայ վախճանմամբ
կամ ուր որ և է պատճառաւ, երկու
ժողովներն անմիջապէս նոր նախա-
գահ մը կընտրեն: Բայց մինչև որ
ընտրութիւնը կատարուի, նախարա-
րաց խորհուրդը կը վարէ գործադր-
իշխանութիւնը:

Յօդ. 8. Ժողովներն իրաւունք ու-
նին թէ ինքնաբերաբար և թէ՛ Հան-
րապետութեան նախագահին խնդ-
րանք, ուրոյն բայց քուէից բացար-
ձակ առաւելութեամբ սահմանադ-
րական օրինաց վերաքննութիւնն ու-
րուիլ:

Ժողովոյ իւրաքանչիւրն այս ու-
րուումն ընելէ ետե՛ միանալով ազ-
գային ժողով կը կազմեն և վերա-
քննութեան կը ձեռնարկեն:

Սահմանադրական օրինաց մէջ
վերաքննութիւն մտցնող որոշումներն
անգամայն բացարձակ մեծամասնու-
թեամբ պէտք է արուին:

Սակայն, 1873 նոյեմբեր 20-ի օ-
րինք Մար-Մահան մարտախա-
տուած իշխանութեանց տեւողու-
թեան միջոցին, վերաքննութիւնն
Հանրապետութեան նախագահին ա-
ռաջարկութեամբ միայն կրնայ կա-
տարիլ:

ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզ 8 մարտ.

Ներքին գործոց նախարարին ընտ-
րութեան պատճառաւ նախարարութեան
կազմութիւնը գծաւորութեանց կը հան-
դիպի:

Փարիզ 8 մարտ.

Չախակողմեանք նախարարական
տաղնապին երկարեւուն համար կառա-
վարութեան հարցում ուղղել կ'սպառ-
նան:

Փարիզ 9 մարտ.

Պ. Պիլլէ, չուղեւոր նոր նախարարու-
թեան անդամակցիլ Պիլլէ-Տիւրքեան
նախարարութեան կազմութիւնը չ'յաջո-
ղեցաւ. ուստի ուրիշ անձերէ նախարա-
րութիւն մը կազմուել միջոցներ կըխորհ-
ուին:

Լոնտոն 9 մարտ.

Երեսփոխանաց ժողովը բանակին ծա-
խուց հաշուեցոյցն ընդունեց: Պ. Կոթ-
համ Հարթի, իւր ներկայացուցած հաշ-
ւեցոյցին վրայ քանի մը բացատրութիւն
ներ տուած ժամանակ ըստ թէ բանա-
կին վիճակը գոհացուցիչ է:

Վիեննա 9 մարտ.

Կայսրը թիւթ և խոթութեան մը պատ-
ճառաւ սենեակէն դուրս չ'ենեւաւ պար-
տաւորեալ է:

Մատրիւ 9 մարտ.

Ալբրաիտ մարտախաղ թաղաւորին
նշարկանալով իւր յարգանքը մատուց:

Լոնտոն 9 մարտ.
Անգլիոյ Պահքայն 13000 լիրա հան-
ւեցաւ:

Լոնտոն 9 մարտ.

Ս.Մ.	Ք.Մ.	43 1/4-3/8
Իսի	3863	69 1/2
»	4869	57 1/8-3/8
»	4874	67 3/8
»	1872	80 7/8
»	1873	55 1/2

Նոր փոխաւորութիւն —

Անգլ. ք.Մ. 93 1/8-1/4

Լիւվերք 9 մարտ.

Բաւարիկ Միւլիսիկ—Օրէն 8—8 1/8
» Չար Տրէրաճ 5
Գալիւ. ած 10000 հակ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ.

Յիւրիոյ նախորդ կուսակալ Հալթթ
փաշան վախճե՛ Բէհեաւի անուանե-
ցաւ փոխանակ վախճանեալ Ֆէրիտ
փաշային:

Պատիւէթ լրագրիւր կըսէ թէ ար-
թիւնն ալ վէհ է. Սոլթանի անհրաժեշտ
քարտուղար Ալթիպ պէյին յանձնը-
ւեր է:

Ֆէրիտ փաշային յաղարկաւորու-
թիւնն երեքշաբթի օրը մեծ հան-
դիպի կատարեցաւ և մարմնը Սուլ-
թան Մահմադի դաւաբարանին մէջ
թաղուեցաւ:

Կայսերական կառավարութիւնն
օտար երկիրներէ քերտած նպարե-
ղինաց վրայ մաքսի տուրքէն զատ
նաե ինքնապի տուրք դնելու հա-
մար մարաքապոլիսի դեպուստաց հետ
բանակցութեան մտած էր:

Լէվընթէ Էրըւտ լրագրիւր կըսէ
թէ դեպուստներն հաւանութիւն
տուեր են բայց քանի մը սրայմանե-
րով. այսինքն, նախ յիշեալ տուրքը
մայրաքաղաքիս համար միայն առ-
նուի. երկրորդ, յիշեալ տուրց հասցիթը
փողոցներու շինութեան գործածուի
և մէկ մասն ալ վեցերորդ շրջանա-
կին (Բէրա և Գալաթիա) յատկանայ,
ուր փողոցները թշուառ վիճակի մէջ
են:

Յիշեալ տուրց սակագինը (Թարի-
ֆա) քննելու և հաւաքման եղանակն
որոշելու համար յանձնաժողով մը
պիտի կազմուի, սրուն դեպուստն
տանց երկրորդ թարգմաններն ալ
ներկայ պիտի դնուին:

Պատիւէթ լրագրին տուած այն
լուրը թէ մինչև 5000 զրջ արժող
տուներն ու խանութները կարուա-
ծական տուրքէ տալու պիտի մը-
նան, սխալ է: Սուրդէն է այս է որ
մինչև 5000 զրջ արժող տուներէն ու
խանութներէն անոնք միայն տուրքէ

Որչա՛րի հրճուանօք հոգ ելի՞նու եալ

